ՈՒսումնական նախագիծ հայոց լեզվից

Նախագծի անունը՝ Զարմանահրաշ գոյական

Նախագծավար՝ Ե. Կոստանյան

Մասնակիցներ՝ VIIա և VIIբ դաս. /12աշակերտ/

Տևողությունը՝ 6.11.2023 – 12.11.2023 /6 շաբաթ/

Նախագծի նպատակները՝.

- Ձևավորել բառերն ըստ ընդհանուր հատկանիշների դասակարգելու կարողություն և խոսք կազմելու հմտություններ.
- Ընդլայնել սովորողների իմացության շրջանակը.
- Հարստացնել սովորողների բառապաշարը
- Նպաստել սովորողների ինքնուրույն, ճանաչողական գործունեության, հմտությունների, ստեղծագործական երևակայության զարգացմանը.
- Խթանել սովորողների պատասխանատվությունը սեփական ուսումնառության նկատմամբ.
- Զարգացնել 21-րդ դարի հմտությունները:

Նախագծի հիմնախնդիրը՝

- *Ինչպես հեշտ և հետաքրքիր դարձնել գոյական անվան ուսուցումը:*

Նախագծի նկարագիրը՝

- *Սովորողների մոտ համակարգային մտածողություն, բառերն ըստ ընդհանուր հատկանիշների*
- *դասակարգելու կարողություն , ճիշտ և գրագետ խոսք կազմելու և հաղորդակցվելու հմտություններ ձևավորելու նպատակով առաջարկվել է սովորողներին , կիրառելով ինքնակրթության որոշ մեթոդներ, գոյականի քերականական հատկանիշները , կիրառության ոլորտները ներկայացնել այլընտրանքային եղանակով, այնպես, որ հասակակիցները հեշտությամբ յուրացնեն , մտապահեն և ճիշտ կիրառեն գրավոր և բանավոր խոսքում;*
- *Աշակերտները կատարել են հետազոտություն՝ ըստ որի պարզել են , թե հասակակիցները և բարձր դասարանցիները ինչ չափով են յուրացրել թեման, ինչ դժվարությունների են հանդիպել, ինչպես կուզենային ուսումնասիրել թեման:*
- *Համատեղ ջանքերով մշակել են գործողությունների ծրագիր. նախագծի վերջնարդյունքում սովորողները ստեղծել են սեղանի խաղ՝ <<Քերականական դոմինո>>, էլեկտրոնային խաղ Qizizz գործիքի միջոցով՝ <<Գոյական անուն>> և ուսուցողական տեսանյութ՝ <<Գոյականի գերդաստանը>>:*